

ՄԱՍԻՍ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՃԵՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 36

I ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Զուգեղան Սանր

Այրիին Զոյցը

Հայ Եկեղեցականութիւնը

Բանաստեղծին Սիրքը

Աշխարհաբարի Խնդիրը

Նաւակը

Օրբով Ֆեոյեի Տալիան

Էջմը Երաշտական Փիլիսոփայութեան

Պատմութեան

Մասիսի Գրական Մրցումը

Նոր Գիրքեր

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Ա. Թ.

ԴԱՆԻԷԼ ՆՇԱՆԵԱՆ

ԽՄԲ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳԲ. ՃԻՀԱՆ

1907

ՊԱԼԻՔԱՆ

ԱՌԱՋՆԱՇՆՈՐԶԵԱՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՆԵԱՆ ԲՆԿ

Դրամագլուխ և պահեստ Գրանք 9,500,000
Վերադարձովագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱԼԻՔԱՆ Բնկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ չափազանց արագ և պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմիջեւի դիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, ևլն. ևլն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՌԻՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյէ Օրիենդ Պանֆի կից, Սիմասօն Խան.



Կը զանուի բոլոր
դեղագործներուն քով:

Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ո. Սօլաքեանց,
Կ. Պոլիս:


ՀԱՅՈՒՂԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանի նպատակն է Հայ ազգիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամբոյ հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները, ինչպէս նաև ընտանիք, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտութիւններ: Միայտն կարուհի մը կ'աւանդէ ձեռագլխութեան, կտրի և ձեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը և կէսը Ծնունդի արձակուրդին: Դաշնակի և երգեսնի համար կը պահանջուի 5, 3 եւ 2½ օսմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դ. իրիկունը: Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարանին Յայտագիրը կամ գրմել Մր. Բիթի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. էֆ. Գալալճեանի, Ատենապետ Խնամակալութեան, Աստղագար:

ԺԱՄԱՆՑ ԵՒ ՏԱՂԱՆԴ

Մեր նախորդ չարթուան Միտքի Զբօսանքը ճիշդ լուծած են հինգ հոգի, որոնցմէ Տիար Երուանդ Գարաճէմեան, վիճակով կ'արժանանայ մեր պարգևին, որ է իր լուսանկարէն 6 օրինակ: Կը խնդրուի Տիար Գարաճէմեանէ Խմբագրատունս ուղղելով ստանալ լուսանկարուելու իր իրաւունքին համար պէտք եղած յանձնարարութիւնը:

Ահաւասիկ լուծումը. —



Մեր Միտքի նոր Զբօսանքն է հետեւեալը: Մասիսի 735 էջի Բ. սիւնակին «Էջ մը Երբայական Փիլիսոփայութեան Պատմութենէն» խորագիրով գրուածքին ամբողջութեանը մէջ յատկապէս ներմուծած ենք ուղղագրական սխալներ: Ընթերցողներէն ան՝ որ գտնէ առաւելագոյն թիւով սխալ՝ իբր նուէր պիտի ոտանայ Քառիմի հեղինակած նոր դերքը՝ Տունեն Ներս: Պատասխանները կ'ընդունուին մինչև չորեքշաբթի իրիկուն, Մասիսի կողքին վրայ միայն:


ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ախտայի և լինաի հիւանդութիւնները, փտած ախտաները կը լեցնէ՝ առողջ ապաներու պէս երկար ատեն դորձածուելու պայմանով:

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ապաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերտ, Մեծ Բարմաք-Գաբու, Թիւ 8: Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգշաբթի օրերը՝ Բերտի Աղքատախնամ դարմանատունին մէջ:

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի:



ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԾԵՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 36

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ՋՈՒՆԴԵԱՆ ՍԱՆԸ

Ահաւասիկ շոշորդ մը, սա Նազարեանը, որ ապագան կը խորտակէ մէկ հարուածով, քիթը երկարելու համար լիայագուրդ՝ կնոշական կեղտոտ քղանցքներու ետեւէ, և տուփական յայրատ ցանկութիւններուն ծարաւովը գրգռուած իր անկուշտ կտուցը թաթխելու զազրալի ապականութեանը և նեխութեանը մէջ այն դարչ ճահիճին՝ զոր կեղծ տարփանքներու վաճառորդ կիներու, շնացող աղիճներու ոտանը կը պարզեն հեշտախտաւոր հոգիներու սովալլուկ կլափին առջև :

Իր պարագան յատկանշական է և լուռ մէկ դրուագը բարձրի այն պատկերին, որով կը յատկանշուին մեր մէջ parvenueները, մեծ թէ պղտիկ, վաճառական կամ ուսանող :

Երէկուան լուացարարուհիի այդ աղան, որ իր դպրոցական պիտոյքները՝ ուսին վրայ գիշերը դպրոցէ դարձին շուր կրելով կը հայթայթէր, որ կը առաջաէր մտմտութեամբ իր վանաքի օրապահիկին, երբ բախտին կատակովը ինքզինքը կը գտնէ առանց իր քրտինքին վատակուած ճոխութեան մը մէջ, կը շա-

նայ , կը շլմորի իր մթին ճակատագիրին յեղակարծ փոփոխութենէն , ինչ ընելը չգիտնար , ինքզինքը կը կորսնցնէ , կը գայթի , կը սայթաքի , կը գլորի ազտեղի ճախճախուտքի մը անդունդին մէջ , ըլլալու համար այն տիպար parvenu, զոր տրժանաւորապէս կը մարմնաւորէ ոտքէն մինչև գլուխը : — Ողբալի հոգի :

Շատ չընէր որ , ամէն բերան միացած , իր գովաբանութեան օլտաննան կը հիւսէին , վեր հանելով իր մէկ կամ միւս ձիրքը , — ենթացական ուշիմութիւնը , կամ անձնազօհ , տքնաշան աշխատող տիպարի մը հոգին , և ամէն կողմէ ամէն ակնարկ իրեն կը յառէր՝ իբր արժանաւոր որդեգիրին՝ հոյակապ ծրագիրով ու առաջագրութիւնով կտակի մը , անոր պատկաւորութեանը կոչուած սանէն սպասելով ապագայ արժանաւոր շնորհք , երբ ողբալի լուրը կ'արձագանգէ թէ՛ ան քստմնելի նահանջի մը մէջ դատալիք կ'ըլլայ և կը քայքայէ ամէն յուսադրութիւն , արդէն կորսուած ըլլալով շնական թակարդներու ցանցին մէջ , ուր պիլծ հաճոյքին , խենէշութեան , Տովանքին պագչոտ խրախճանքները և ցնծութիւնները , տօնուած հեշտախտոյղ գիրկնգլխառնումներով և տուփական մոլեգին արբեցութիւններով , կը վարագուրեն իր աչքերը կեանքին ապագայ ամէն հեռանկարներուն , զորս կ'ընդօրոնէ չարաչար , ինքնամուսաց մոլեգնութեան դժբախտ նոպայի մը անձնատուր :

Խեղճ կորսուած հոգի . . .

Իր մտքորանքին և կորուստին այս վախճանը՝ մեծ պատասխանատուութիւն մը կը ծնցնէ , և ադ՝ ծանր բեռ մը պէտք է դառնայ խելճին վրայ՝ անոնց՝ որոնք յաջողութեան ընտրութիւնը այս անյանձնարարելի ներքինով տղուն , ճշմարիտ զրկանքներ ընելով , ժամանակին , ուրիշներու , և խաթարելով , եղծելով , լուռ զեղծումի մը առարկայ ընելով կտակը այն պատուական Հայուն , Ասպետ Զունդին , որ ամբողջ համայնքին մէջ , միակը եղած է մեծապէս ողջափառ ու ծափահարելի գաղափարականութեամբ արեւդործութեան միջոց մը , ձեւ մը յղացող :

Երբ նազարեանի մեկնած տարին Զունդեան մրցումը տեղի կ'ունենար , անուանական ձեւակերպութիւնով մը քողարկուած ,

Յանձնաժողովի անդամներէն մինչև մամուլ ու հասարակ ժողովուրդ, կանուխէն, որոշ հաւատքը ունէին թէ՛ կեդրոնականի այդ աղքատ ընթացաւորտը պիտի ընտրուէր, որովհետեւ ան իր չքաւորութեանը համար, — աղքատութիւնն ալ առաքինութիւն մըն է եղեր, — յարմարագոյն ընտրելին ըլլալ կը դաւանուէր, որովհետեւ կ'ուզուէր որ կեդրոնականէ՛ն սան մը զրկուի, և որովհետեւ, «առաւել քան զամենեօր», ան պաշտպանեալն էր բարապանի մը, և երբ մէկը բարապանի մը պաշտպանեալն է, կրնայ վստահ ըլլալ իր յաջողելուն, ուրիշ ո՛ր և է մրցակիցի անկումով, ի՞նչ որ ալ ըլլայ անոր առաւելութիւնը, իրաւունքը և արժանիքը :

Եւ ատանկ ալ եղաւ :

Թեկնածուները շարունակ կը յաջորդէին իրարու, բայց ամէնքն ալ կը մերժուէին՝ երբեք դո՛ւ հացուցիչ, որոշ ու մեկին առարկութիւնով մը, այլ կ'ուզէին ալ ի, տարտամու անտրամաբանական ժխտումներով, Այն ատիճան որ, ան ատեն, թեկնածուներէն մէկը, եռանդուն երիտասարդ մը, որ կտակէն պահանջուած ամէն պայման կը լրացնէր, չկրնալով հանդուրժել շատ մը ուրիշներու հետ իրեն ալ եղած զրկանքին, մինչև լրագրական բեմը հանեց իր բողբոջը, զոր սակայն . . . ի՛նք միայն լսեց :

Կը լսեմ թէ՛ այս օրեր ալ, երբ Զուռդեան կտակին նոր թեկնածուները կը պատրաստուին դիմել մրցումին, իրենց խնդրագիրները մատուցանելով անոր Սրբազան Նախագահին, անոնցմէ մէկը՝ Պէրպէրեանէն ընթացաւորտ և Պէրպէրեանի մէջ ուսուցիչ՝ Պրն. Տէօվէթ Գէորգեան, նոյն անմեկնելի մերժումին է հանդիպեր, և իր խնդրագիրը անընդունելի հռչակուեր է մէկ ճայնով, անմիջապէս յաջորդօրէն իր մերժումին՝ գաւառ ուսուցչութեան երթալու, ինչպէս պահանջուեր է իրմէ ստիպողաբար, փոխան մրցումին մասնակցելու :

Առանց անդամակիցներու հաւանութեան միաձայն որոշումի և վճիռի ի՛նչ նորաշան մեթոտ է աս, որ կրնայ գործադրելի դառնալ մեր պատրիարքարանական-վարչական շրջանակներուն

մէջ : Ո՞ր արդէն որոշուած ընտրելին է ան արդեօք՝ որ կը հա-
լածէ հիմակուց ներկայութիւնը և օրինաւոր իրաւունքը ուրիշ
թեկնածուներու :

Նաղարեանի սոյթաքումը՝ աւելի կ'ողբացուի հիմա՝ իր
ձախորդ ընտրութիւնը պատրաստող պատճառներուն համար
մանաւանդ :

Իր օրինակը ուժով դատ մըն է որ՝ ամէն ուշադրութիւն
կեդրոնանայ արժանաւոր ընտրութիւններու վրայ , չչեղեցնելու
համար նպատակը և Քաղձանքը այն ողջամիտ կառավարելին , որ
ճշմարտապէս՝ արդիւնաւոր ու երախտարժան բարեկարութեան
մը յղացողն է հանդիսացած , աւա՛ղ , առանց իր հետեւողը ու
նենայու :

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

“ՄԱՍԻՍ” Ի ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Մասիսի այս քիւով կը հաստատենք գրական պարգեւաւոր մրցում
մը , որուն հետեւեալն են պայմանները . —

Մրցումի նիւթն է պատմութիւն մը , ուր պէտք չէ գայութիւն ունե-
ցան կի՛ն , աղջիկ եւ սէր : Պատմութիւն պէտք է ե՛ն շատ գրաւէ Մասիսի
հինգ էջ : Նկատի պիտի առնուին՝ գրութիւն ո՛նր , նիւթին հրապոյրը ,
պատմելու կերպը , վերջապէս ընդհանուր գրական յաջողութիւնը :
Գրութիւնները կ'ընդունուին մինչեւ հոկտ. 15 (Թ.) , որմէ ետք արդիւնքը
պիտի ծանուցանենք հոկտ.ի վերջը : Մրցումին պարգեւն է հետեւեալը . —

Նրբէ գլուխ-գործոց վեպեր ամենէն համբաւուած հեղինակներէն .

ՕՔԹԱՎ ՄԻՌՊՈԻ Le Journal d'une Femme de Chambref.

ԿԻ ՏՐ ՄՕԲԱՍԱՆԻ Une Vie.

ՄԻՇԷԼ ՔՕՌՏԷՐ Venus.

Եւ հսկայ հաւաքածոյ մը պատմութիւններու հետեւեալ ամենէն
հռչակուած հեղինակներէն . —

Ալեօնա Ալե

Ալեքսանդր Տիմա Ուրի

Բոլ Պոնով

Առման Շառքանքիէ

Միշէլ Քոռէ

Հանրի ք Բեքիսու

Վիքթորիէն քիւ Սուէ

Լիւսովիք Հալիվի

Ֆեռնան Վանսէնով

Հանրի Լալսան

Մօռիս Լըպլան

Բոլ Պուռժէ

Ժիլ Բլառքի

Շառլ Մօնարիէ

Շառլ Ֆօլէ

Լուի ք Ռօպէռ

Լեօն Վէյնպէռ

Կի ք Թեռամօն

Թրիսքան Պեռնառ

Ժիլ Լըմէրո

Մառսէլ լ'Էօնէօ

Բոլ Մառկոթք

Մառսէլ Բոնիօ

Ժան Ռեպրալս

Ժիլի

Արքըր Շնիցկո

Ժան ք լա Վօսկո

ԱՅՐԻԻՆ ԶՐՈՅՑԸ

«Զի ամենեքին կալան գնա կին»

[Մաս. ԻԲ. 28]

Գիրկե գիրկ անցաւ, բարձերե բարձի,
Ու հե՛տ ժամերու քալկացնող դարձի
Յեղեղումներուն մի՛տ՝ ակընկալու՝
Ասեմ չունեցաւ իր սուգը լալու :

Գիրկե գիրկ անցաւ, բարձերե բարձի,
Պե՛րն խոսումներով օծիս ու վարձի . . .
Հին առագաստի նոր հիւրընկալու՝
Ասեմ չունեցաւ իր սուգը լալու :

Գիրկե գիրկ անցաւ, բաղձերե բաղձի,
Խեք մը չըզգալով կարօս ու քաղցի .
Հանոյքի գրա՛ս մը դարձած հըլու՝
Ասեմ չունեցաւ իր սուգը լալու :

Գիրկե գիրկ գլեցաւ, շրջումե շրջում . . .
Ու մեռելական ձայներն երբ շրջում
Վերջին համար ալ լացին լու ի լու . . .
Ինքն ալ նքստաւ լո՛ւ ու իր սուգը լալու :

*
**

Այն չարաբասիկ հարազաներէն
Անդրանիկն երդմամբ քսած էր իրեն .
«Կեանքի ծառն ես դուն, ու քո՛ղ որ յարմար
Յօրինե՛մ եղե՛մ մը քեզի համար» :

Երբորդն՝ իր կարգին՝ նեւեով մը կ'ըսէր
Իր ընկողմնումին մեջ քոյլ մեղկասէր .
«Իմ սրբիս քերական ես դուն, քո՛ղ յարմար
Հանդերձե՛մ բազի՛ն մը քեզի համար» :

Երբորդն ալ քսաւ՝ մեջ իր գիշերին՝
Աղապատանքի տեղով մը ջերին .
«Սիրոյ աղբերակն ես դուն, քո՛ղ յարմար
Աւազան մը ջինջ կանգնե՛մ քեզ համար» :

Զորբորդն համբոյրի մը տաք շունչերով
Քսած էր անոր՝ աղիքն ի գորով .
«Իմ գրկիս տառակն ես դուն, քո՛ղ յարմար
Շինե՛մ փափկութեան բոյն մը քեզ համար» :

Հինգերորդն ուժգին վարած քեներուն՝
 Ըսած էր անոր՝ հմայքով սեւեռուն .
 « Իմ միակ այծեա՛մս ես դուն , քո՛ղ յարմար
 Կընդրուկի լեռներ տընկե՛մ քեզ համար » :

Վեցերորդն հանգչած մօտ անոր սնարին՝
 Աչքերուն յառեց նայուածք մը խորին ,
 Ըսաւ . « Մարմնիս ճրա՛գն ես դուն , քո՛ղ յարմար
 Աշտանակ մ'ուկի մուկե՛մ քեզ համար » . . . :

Բայց ամենքն ալ , ա՛ն , շո՛ւտ ընկշուգեցին՝
 Ինչպէս կը պատմէր բիրտ Սօդուկեցին՝
 Վարդի ու մեղրի բուբումներն ու համ
 Անյոյս ըստուերի մը մեջ տարածում :

Վերջինն ալ՝ Կըրտսերն՝ իբրեւ ամուսին՝
 Շօշափեց անոր անրակներն ուսին ,
 Ըսաւ , « Հոգւոյս բռնի՛ցն ես դուն , քո՛ղ յարմար
 Հրեշտակի քեներ վերտե՛մ քեզ համար » :

Ու երբեքն անյո՛յս՝ երբ երկընքի շուրջ
 Կ'ուզէր վախադրել Անոյշքն ու անուրջ . . .
 Ա՛ն ալ մեռաւ վաղ բողով անորդի
 Այրին՝ որ ալ տրո՛ւփ մը ջուներ սըրտի :

Գիրկէ գիրկ գլեցաւ , շըրտումն շըրտում . . .
 Ու մեռելական ձայներն երբ տըրտում
 Վերջնին համար ալ լացին լու ի լու . . .
 Ինքն ալ նըստաւ յո՛ւռ իր սուգը լայու :

Ա՛լ տենջ մը ջուներ անպրեյու կըրկին
 Մահուան պաշտօնի նըւիրում ալդ կինն՝
 Որ սըրակապանի նըզովքն իր վըրան՝
 Չը կըրցաւ կանգնել կեանքի մը սրբան :

Եղեմն ու բագին , առազանն ու բոյն ,
 Կընդրուկի լեռներն , աշտանակն ոսկւոյն ,
 Անցա՛ն , սահլցա՛ն . . . Ինքն արեւու տակ
 Ո՛չ մայր մը եղաւ , ո՛չ վերն ալ Հրեշտակ :

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ ԳՈՒՐԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՋ

Բ. Մ Ս Ս

Ը.

Մեր քառասունքի օրերը միաթիւք ու կրօնական խորունկ տպաւորութիւն մը թողած են վրաս : Դուրսը հապոյզ կրօն կուսակցութիւնը, հազիւ ուրիշ մարած արձագանք մը կը բերէր եկեղեցիի պատերէն ներս , ու մենք Եկեղեցիին տպագայի հեռապատկերովը դրաւում աւելի, կը խորհէինք այն մեծ դերին մասին , զոր կրօնքը կատարած է դարերէ ի վեր , և զոր դեռ երկար ատեն պիտի շարունակէր ունենալ : Մարդկութեան պատմութիւնը ստեղծող անյեզլի օրէնքը , իբր «համայնական (commun) նկարագիրը բաղմաթիւ իրողութիւններու , անջնջելի հեռքերը ցոյց կուտար ազդեցութեանը կրօնական ա'յն հաւատալիքներուն , որոնք դրեթէ միշտ ընդգրկած են պատմութիւնը կազմող բոլոր տարրերը , մարդուն տպրեկալիկը պէն մինչև գիտութիւնները և արուեստները : Կրօնքներու և հաւատալիքներու բազմապատկեան գիտնական ուսումնասիրութիւնը մանաւանդ , որ ո'չ հաւատամուրի անձ կամութիւնը ունի , և ո'չ ալ կուսակցականութեան ազանդաւորական ալլամերժութիւնը , կրցած էր մեզի ներշնչել , թէ կրօնական հաւատալիքները ա մէջէն հոսթիու ազդեակները եղած են մարդկային կեանքին և անոր յաւաքողութեանը , և թէ՛ իբր այդ՝ անմահ պիտի մնար կրօնական ոգին , հոգ չէր որ Բահաւի մը՝ Էլոհիմ , Էլոհիմի մը՝ Նուրիդէր , Նուրիդէրի մը՝ Նոփա , և Զեւսի մը՝ Աստուած յաջորդած ըլլային , այդ հաւատալիքներու յաջորդական փոփոխութիւններու շարքին մէջ : Այդ անունները արտայայտութիւններ են միայն , զոր կրօնական ոգին կը ստեղծէ , ընծայացուի մը (initateur) կամ առաքեալի մը , Մովսէսի մը կամ Պուտայի մը ձեռքով , ժողովրդական նկարագիրի հասունութեան զանազան աստիճաններուն մէջ , դոնէ անոնցմով ժամանակաւոր ու անկայուն ձեւի մը մէջ խտացուցած ըլլալու համար իր աննիւթ իմացումները , զգացումները , յոյզերը ու յղացքները : Եւ որովհետև , ինչպէս ընդհանուր ժողովուրդներու , նոյնպէս մեր ժողովուրդին համար անհրաժեշտ էր փնտռել կրօնի կռուան մը , ուր կարելի ըլլար ապագայ ընկեր-հոգեւորական կեանք մը ապահովել , մեր կողմէն կատարուած ուսումնասիրութիւններն ու ընթերցումները գոնէ ինծի՝ սա հաւատքը ներշնչեցին , թէ «ժողովուրդի մը նկարագիրը և հաւատալիքներն» էին իր կրօնի ձեւատագիրին միակ բանալիները , թէ՛ եթէ երբեք ամէն հաւատացող սովորամուր մըն է ինքնին , այդ սովորամուրութիւնը իր արդարացուցիչ պատճառը կը գտնէ սա իրողութեան մէջ , թէ «ժողովուրդի մը հաւատալիքներու վիճակին մէջ դոյզն փո-

փոխութիւն մը , իր կրօնքին դոգմութեան մէջ կերպարանափոխութիւններու ամբողջ շարք մը յառաջ կը բերէ», և թէ՛ հետեւաբար , հակառակ սովորամոլ ժողովուրդներու անջիղ երկչոտութեանը , պատմութիւնը , իբր ծնուցիչ և արդիւնք յաջորդական և անխուսափելի փոփոխութիւններու , իր հոսանքին առջեւէն կը քշէ կը տանի սովորամոլն ու լայնախոհը հաւատարապէս , մէկը՝ ընկուզելու իր աղիքներուն խորքը և միւսը՝ աղաղային համար , ծաղկեցնելու իր փրփուրներու ծոցին մէջ :

Ահա ա՛յն համոզումները , որոնք կրօնական քննադատութեանս ողին իմ մէջս մեծցուցին Հայ կուսակրօնի համոզումներու հետ , իբր երկու ուժեր , որոնց միացումովը միայն կարելի պիտի ըլլար ծառայել մեր ժողովուրդին հոգեւոր կեանքին , հակառակ անոր , որ նոյն իսկ ժողովուրդը պիտի բողոքէր կրօն . փոփոխութեան հանդէպ իր ունեցած անսիրելութեան դարաւոր ունակութիւնով : Եւ երբ ասկէ տարիներ առաջ մեր դրած կրօնական յօդուածներէն մէկով Կրօնքը վերլուծելով , իր dogmերուն և doctrineներուն մէջ , հոն ցոյց առինք երկու որոշ տարբեր , մէկը առարկայական (objectif) և աստուածային , անփոփոխելի տարրը կրօնքներու մէջ , և միւսը ենթակայական (subjectif) և մարդկային , որ կը փոփոխուի շարունակ , մարդկութեան մտաւոր զարգացման աստիճանի ելեւէջներուն համաձայն , դժգոհութեան և բողոքի տարափ մը սկսաւ[*] : Անակնկալ մը չէր եղածը . ճշգրիտ նշանառութեան մը անընդմիջական տրդիւնքն էր ան : Պահանջեցինք , որ ժողովրդական հաւատքը հիմնաւորուած , շարունակ մը դառնայ իրեն համար , քանի որ նկարագիր ու հաւատալիք պիտի ըլլային համայնքի մը հոգեւոր ուժերը , թէ՛ քանի որ «կրօնական վարդապետութիւններու հետզհետէ մաշուած ու եղծուած clichéները» իրերու բնական հետեւութեամբ շարունակ պիտի վերանորոգուին , և , դժբախտաբար թէ բարեբախտաբար , նոր կերպարանափոխութիւններ պիտի ստանան , անհրաժեշտ է , որ այդ clichéները նմանցնենք դոնէ այն նախատիպին , զոր մարդկութեան ներկայացուցած են Կրօնքի հիմնադիրները , որովհետեւ այսօր , «միեւնոյն կրօնքին հեղինակը և հետեւողները հակառակ այդ միեւնոյն կրօնքին հեղինակը և պահպանողները ըլլալուն , իրարու անձանօթ կը թուին ըլլալ , իբր օտարներ , որոնք միեւնոյն լեզուն և միեւնոյն բա-

[*] **Արեւելի** իր վերջին ձեռագիրտրիւններուն մէջ իսկ այս միեւնոյն «թեզը կը պաշտպանէ արդէն : Ասկէ առաջ գերմանացի Բրոֆ. Էօյֆեկի գործերուն մէկ վերլուծումին միջոցին **Արեւելի** կը գրէր , անշուշտ Էօյֆեկի կրօնական ուսումնասիրութիւններու փխրափայտական դրոշմեկէ իբր փառածք մը , քե . «Կրօնի մէջ մշակութիւններ կան , որոնք անփոփոխելի են , քեւ կրօնական կեանքը եւ շատ ընթացողներ մշակութիւն ըլլան» : Եւ այս մշակութիւններէն բացառութիւն մը չկազմէր Քրիստոնէութիւնը՝ Էօյֆեկի յայտարարեալը :

ուերը կը խօսին , առանց իրարմէ հասկցուելու» . և մասնանշեցինք , թէ այդ անհասկացողութիւնը տեղի կ'ունենար շատերուն տեսողութեանէն աննշմար անցած բառերու իմաստափոխութեան մը հետեւանքով : Շատեր այն ատեն , կրօնական ուսումի իրենց անգիտութիւնովը , բաւական ազմուկ յարուցին , նոր վարդապետութիւններ ուղեցին տեսնել , նոր վարդապետներու գրիչին ծայրը : Զարմանալի չէր երեւոյթը : Չէինք կրնար սպասել որ անոնք անմիջապէս հասկնային , թէ Տաթեւական օրթոտքութեան հանդէպ բացասական կաղապարով մը դուրս բերուած մեր յօդուածներուն սկզբունքները չէին հակասեր ո՛չ Կրօնքին և ո՛չ ալ Եկեղեցիին , որոնց ներշնչած սրբամաքուր հաւատքը ուղիղ չէր կրնար համեմատիլ սխալ հասկցուած և բառերու իմաստափոխութեան հետեւանքով սխալ բացատրել ուղուած կեղծ ուղղափառութեան մը հետ : Optiqueի խնդիր մըն էր պարզապէս պնդելը , թէ մենք՝ Արմաշականներս կամ գոնէ այն Արմաշականները , որոնք համարձակութիւնը և անկեղծութիւնը ունեցան , իրենց dogmatique համոզումները արտայայտելու , Եկեղեցիի ոգիին հակառակ կը գործենք : Այդ տեսակ պնդում մը՝ իմ վրաս՝ ճիշդ ա՛յն տպաւորութիւնը պիտի գործէր , ինչ տպաւորութիւն որ պիտի գործէր ընապատմումի մը վրայ , եթէ մէկը ելլէր յայտարարելու թէ՛ Կարմիր Մովուն ջուրերը կարմիր են իրապէս : Բաւական չէ իր ամբողջական զանգուածին մէջ և իր կարմիր յատակին վրայ միափող այդ ծովը դիտել դուրսէն ու հեռուէն . դիտէ այդ Մովի ջուրը կաթիլ առ կաթիլ , և այն ատեն պիտի տեսնես Կարմիր Մովու ջուրերուն մաքուր և անդոյն վճիռութիւնը : Պէտք չէ՞ր որ ամէն խնդիր քննուէր ճիշդ ա՛յդ ջուրի կաթիլներուն նման , optiqueի այդ հիւանդ պատրանքը լուծելու համար :

Բացարձակ ամբողջական մը դատապարտուած մեր օրագրական հրապարակը , մէկ հոսանքով չբաւականանար , երբ խնդիր մը մէջտեղ ելլէ : Հակահոսանքները անհրաժեշտ են խնդիր մը ուսումնասիրելու համար : Մեր կրօնա-քննադատական առաջին փորձը՝ Վերնասան Լեզոնախօսութիւնը՝ որ իր ժամանակին տգէտ և բռնուն ընդդիմութիւն մը դատաւ , առանձին չմնաց իր տեսակին մէջ . հետզհետէ Կրօնի Հիւժախօսը , Պոլիքսենի Պատրանքը , Ջնչին «Եւ»ը , Պատկերները , Բնապաշտ Բարոգը և ուրիշ շատ մը յօդուածներ հետզհետէ միտքերը առաջնորդեցին դէպ ի կրօնական նիւթերու մշակութիւնը , որուն համար նախ պէտք էր հետաքրքրութիւնը արթնցնել , որովհետեւ ամէն սեռ այդ հետաքրքրութեան պիտի ծնէր դէպ ի Կրօնքը , Հաւատալիքը , Եկեղեցին և նոյն իսկ դէպ ի համայնքին եկեղեցական ճակատագիրի հարցը : Եւ եթէ երբեք կա՛մ տգիտութեամբ , կամ թաքուն նպատակով դատափետողներ ունեցանք մեր այդ յօդուածներուն համար , սակաւաթիւ չէին նաեւ անոնք , որոնք կրցան թափանցել մեր ոգիին , կշռել մեր գործերուն

արժէքը . և բազմաթիւ դրողներու մէջէն Ռ. Որբերեան «Ճշմարտութեան Ձայնը» վերնագիրով , իւր թարգման շատերու , գրեց , թէ այդ յօդուածներու հեղինակին « հոգին ու սրտը մերն է , ամէնունն է » . [Արեւելք , թիւ 4214] : Եւ Ա. Յարութիւնեան մեր անձին ու զրաճներուն մէկ վերլուծումին մէջ , շեշտելով մեր գրածներուն կարեւորութիւնը և անհրաժեշտութիւնը՝ տեսակ մը հեգնոտ իմաստասիրութեամբ կը հարցնէր . « Կը զարմանամ , թէ ինչպէ՞ս թոյլ կը տրուի իրեն՝ անկեղծութեան այդ աննկատ խոյանքը : Կրօն . Ժողովը և հասարակաց կարծիքը կը քնանան արդեօք , ու Շահնազարեան կտրապետ վարդապետը դատող հաւատաքնութեան ատեսանը՝ Տէրոյնցներու պակասութեան մէջ անդամալուծուած է յաւէտ . [Արեւելեան Մամուլ , 1903 , թիւ 21] : Թողունք այս ամէնը , նոյն իսկ Օրմանեան Սրբազան , իւր կրօնական գիտութեան մասնագէտ , ինքն իսկ կը հաստատէր զրաճներու ճշտութիւնը . « Ոգիին ըսելիք մը չունիմ » : Կը պահանջուէր միայն , որ կեղծաւորեմ և ծածկանունով մը գրեմ այդ յօդուածները : Որովհետեւ կը մտածէի թէ « համոզումի մը ծածկանունով հրատարակութիւնը , մասամբ այդ համոզումին ուրացումն է » , հետեւաբար կ'առարկէի թէ « չեմ ուզեր այդ հաւատաւարացութիւնը ստանձնել » : Եւ այս ներշնչումին վրայ դրեցի Հեղինակի Վախ յօդուածներս [Ծաղիկ , 1902 , թիւ 285] : Մեր կրօնական ոգիին դէմ հալածանքը այնքան տուժ տարուեցաւ անիրաւօրէն , որ ալ անհաւատ , անկրօն մակդիրներ սկսան նետուիլ Արմաշականներու հասցէին : Ինչո՞ւն չփնտուեցաւ . ոչ ոք ուզեց անաչառօրէն դատել և ամէն դատաւիտում , բաւերէ անդին չանցաւ բնաւ : Սա ստոյգ է , որ ընթերցողներէս ոմանք , սխալ առաջնորդուած , սկսան լուրջ տարակոյսներ ունենալ Արմաշեաններու մասին : Այդ միջոցին էր որ Արամ Անտոնեան , « Արմաշականներու Մասին » իր յօդուածը գրեց , ուրկէ սա քանի մը տողերը կը դնենք հոս . « Դժգոհութիւնները , զորս յարուցին (Արմաշականները) , մեղի ցոյց կուտան , թէ ո՛րչափ իրաւունք ունէին , երբ կ'ըսէին , թէ մեր կրօնքը այսօր նոյն իսկ իր պաշտօնեաներէն սխալ հասկցում է , թէ սոսկ արտաքին հանդամանք մը ունեցող ծէսեր կը չփոթուին կրօնային աւելի հարադատ ու հիմնական սկզբունքներու հետ , և թէ հաւատքը , այդ սխալ ըմբռնումին հետեւանքով , իր վեհութենէն ու զեղեցկութենէն մերկացած , հասարակ ձեւապաշտութիւն մըն է միայն դարձած : Ծէսի մը դէմ պզտիկ ակնարկութիւն մը ընելնուն պէս՝ իսկոյն անհաւատ կոչեցին զիրենք , իւր թէ հաւատքը միմիայն ծէսերու պաշտանքին մէջ ամփոփուած ըլլար : Յաւային հոն է , որ նոյն իսկ Եկեղեցիի բարձրատիճան պաշտօնեաներ դռնուեցան , այդ սխալ ամբաստանութիւնը ընողներուն մէջ , և ահա տակաւ առ տակաւ գոյացաւ հանրային կարծիք մը , որ ալ անպայման կերպով անհաւատ կը դառնայ Արմաշը և Արմաշեանները : Ծշմարիտ քննադատը նախ գործի մը ընդհանուր ձգտումը նկատի կ'առնէ՝ և յետոյ այդ ձգտումին իրականացման համար կիրարկուած միջոցները : Արմաշեաններու դժբախտութիւնը սա եղաւ որ՝ իրենց քննադատները — թերեւս անոր համար որ մեծ մասամբ միակողմանի և որոշ հաշիւներով ու նկատումներով կաշկան-

դուած էին — միմիայն իրենց կիրարկած միջոցներուն վրայ ինկան և անոնցմով մաքառեցան իրենց դէմ, առանց երբեք իրենց նպատակը նկատի առնելու . . . Այդ բաց թողուած նպատակը սակայն դեղեցիկ էր, քանի որ նոյն ինքն հաւատքի բարձրացման և սովորութեան կը ձգտէր. անկեղծ մարդ մը, որչա՛հ ալ անդրաւեճական ու խաւարամիտ ըլլար. այդ նպատակին նկատառումէն մեկնելով երբեք չպիտի կրնար Արմաշեաններու անհաւատութեան պիտակ մը փակցնելու յանդգնութիւնը ունենալ . . . Բայց այդ երեւոյթը պէտք չէ որ մեզ յուսահատեցնէ: Հասարակութեան գոյացուցած որ և է մէկ սխալ կարծիքէն աւելի փոփոխական բան չկայ. կարելի է անոր դէմ մաքառիլ, զայն չըջիլ, և ինչ որ իր կրօնային զգացումներուն տեսակէտով խորթ կ'երեւայ այսօր, վաղը իբր դեղեցիկ և անարատ ընդունիլ տալ: Ուրեմն, փոխանակ կարգ մը անձնական դատապարտելի հաշիւներու սիրոյն այդ (հերետիկոսութեան, անհաւատութեան) կարծիքին տարածման նպատակու, պէտք է աշխատիլ, որ ձուր վիճակին մէջ մնայ, ձեւ չառնէ եւ մեռնի, որովհետեւ, անգամ մըն ալ կրկնենք, կրօնքը պարզելու և հաւատքը աւելի խոր և գիտակից դարձնելու նպատակը, զոր ունին Արմաշեանները, դեղեցիկ է և ամէն համակրութեան արժանի: Պէտք է մոռնանք և մոռցնենք միջոցներուն անպատեհութիւնը և կրօնքը բարձրացնող այդ նպատակը մէջտեղ դնելով, անոր իրականացման գործակցինք»: [Ծաղիկ, 1904, թիւ 2] :

ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ն Ա Ի Ա Կ Ը*

Կր հեռանայ նաւակն, յուշիկ, ծովեզրէն,
Դեպի ծովուն օսարութիւնն համր ու թուխ . . .
Փայլ մը չկայ. մեզին մեջէն արսաբուխ
Ողջերն ե խօշ որորներուն ձիւնեղէն:

Ծովն ե Մարդուն հեճիկն քափուր համօրէն .
Նաւաստիէն զոս ուրիշ ո'չ մեկ գոռիս,
Ուրիշ ո'չ մեկ հեճ՝ նաւէն զոս, ո'չ մեկ ծուխ .
Ա՛հ, նաւն ու ծով միքեմահուան պէս շուրջ չե՛ն . . .:

Կր հեռանայ, ցոռկը դեպի հորիզոն,
Ուր շեղակի կծու համեր կը հոսեն . . .
Տակաւին քա՛յ մըն ալ ու նաւն որ կայ հոն,

Բաճի շարժին իր քեւամիտներն յամրօրէն,
Կր նմանի խաչի մը շար քաքախուն
Կանչելով, ա՛հ, միշտ կանչելով առ'ն Անհունն . . .:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

* Դիտելի է որ, հակառակ իր գրականութեանը մասին մեր անցեալ խիստ դուքիւններուն, եղբարդ Դօլանեան լայնամտքիւնը կ'ունենայ իմբաբերաբար իր աշխատակցութիւնը ներկայացնելու Մասիսի, որ իմով կ'ողջունէ գրական դաւանութեան զազախարակից մը:

Խմբ. Ծան:

Դերձուածը զոր համայնով կը հրաւարակենք
ստորեւ, մէկ սիրուն պատմուածքն է Սիէնրիէ-
վիցի, զոր մեր բանաստեղծ աշխատակիցը, Պար-
սամեան արծալ գրուածքէ մը տաղաչափուած
բանաստեղծութեան վերածելու սիրուն շղացումը
ունեցած է, արուեստի անձերի յաջողութիւնով
մը եւ պահելով ամբողջ հմայքը, կենդանութիւնը
եւ շնորհքը հէքեաթին, զրականութեան զմայլելի
էջ մը, որ բնագիրին հաւասար արժէքով կանմա
հանայ մեր մամուլին ալ մէջ, այս անգուղական
ու հմայիչ հայացումով :

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ

I

Լիալունի յանկուցիչ զիշեր մըն էր տեսլային,
Քրիշէնա իր խորունկ անրջանքէն ըսծափած,
Ինքնիրենը կը խօսէր. — «Կը կարծէի որ երկրին
էն լաւագոյն էակը, դրախտածին, սիգապանծ,

Մա'րդն է միայն. և սակայն, է՛հ, սխալած եմ եղեր:
Հեռուներէն կը տեսնեմ գէջ ծաղիկը Լօթիւսին,
Որ կը շարժի զիշերուն սիւքին շունչէն մշտերեր.
Միւսներուն պէս բնաւ զոյրութիւն մը չէ ուին:

Տերեւները կը սկսին բացուիլ լուսնին ոսկեծոր
Նշոյլներուն տակ շաղոտ. ու ես նայուածքս չեմ կրնար
Բաժնել իրմէ, է՛հ, երկրիս վրայ չիկայ բան մը որ
Անոր նման նուրբ ըլլայ ու անոր պէս զիւծափառ »:

Յետոյ յանկարծ որոշեց. — «Ինչո՞ւ համար ես՝ չատուած՝
Ձը հնարեմ անձերի արարած մը զեղակուռ,
Ինչ որ է Թարմ Լօթիւսը ծաղիկներուն մէջ բացուած:
Լօթիւս, չքնաղ կոյսի մը վերածուելով քովս եկուր. . . »:

II

Իբրեւ Թէ Թոյլ Թեւերը ծիծեռնակին օդայած
Իրեն հպած ըլլային, խռովեցաւ ջուրն իսկոյն.
Անօտարցաւ խաւարը, ու աւելի՛ պապղաց
Լուսինը որ երկինքէն կը ծորէր լոյսն իր սոճոյն:

Ու մոռնին մէջ Թռչուններն շա՛տ աւելի հոգեխառով
Սիրերգեցին. ամէն բան, քիչ մը ետքը, լուռեան
Խոր գիրկին մէջ սուգուեցաւ. . . Քրիշէնայի խօսքով՝
Լօթիւսն եղաւ աղջիկ մը, նրբամարմին, աննըմպն:

Գեղեցկութեան, շնորհի խտացումն էր ան ամբողջ,
Իր հասակով զեղակերտ, ոգորիկ նըմանող.
Կարծես անմահ, զգուսնոյշ աստուածացումն էր կընող,
Իտէալը անուրջին, և բազինը լուսաշող:

Ձատտուածը իսկ հիացաւ այս զգլխիչ էակին .

— «Մի՛նչ հիմա լինեալուն ծաղիկն էիր , ըսաւ ան ,
Ասիկէ վերջը խորհուրդիս ծաղիկն եղի՛ր սարսուղին » :
Աղջիկն ըսկաւ խօսիլ . ձայնը կարծես ամառուան

Մեղմ շշուկն էր սիւքերուն թեթեւաշունչ , սիրանաղ ,
Որոնք յաճախ կուգային հպիլ մարմնին լօծիւսին .
— «Բա՛է՛ , ինձի , հծծեց , ի՞նչ բնակարան պիտի տաս ,
Դուն որ , Տէ՛ր իմ , էակ մը շինեցիր զիս մարդկային :

Մի՛ մոռնար թէ համբոյրը իսկ հովերուն հըպանքին
Սարսուռ կուտար արմատիս և տերեւներս կը զոցէր .
Կը վախնայի ամպրոպէ՛ն , մըրիկէն մոլեգին ,
Որտուովէն ու տապէն , մծնդորտէն թօնարէր :

Կը սոսկայի նոյն իսկ շերմ հառագայթէն Հրատին ,
Հին խառնուածքս պահեր եմ , թէև փոխուած զիս զսնես ,
Արդեօք ո՞ր զիս դուն պիտի ապրեցընես , ա՛հ , Տէր իմ » :
Քրիշէնա աչքերը վեր բարձրացուց մշտակէզ .

Ու դիտելով երկնային լոյսերը ջինջ հարցուց ան .

— «Կ'ուզե՞ս ապրիլ լեռներուն կատարները բարձրաբերձ » :
— Տէ՛ր իմ , հոն ձիւն , փոթորիկ ու սառոյց կայ , կը վախնա՛մ » :
— «Լա՛ւ , կ'ուզե՞ս որ բիւրեղէ ապարանք մը լուսայեղծ ,

Քեզի համար կանգնել տամ , ալիքներուն մէջ ծովուն :

— «Ձուրերուն տակ հրէշներ , օձեր կ'ապրի՛ն դիւական » :
— «Կ'ուզե՞ս երթալ բնակիլ սթէքներուն մէջ հեռուն » :
— «Քամիները ամէն ժամ սթէքներուն կը սպառնան » :

— «Ուրեմն քեզի ի՞նչ ընեմ , ո՛վ դուն ծաղիկ մարմնացած ,
Էլլօրայի մծատուեր բարալրներուն մէջ ո՛րքան
ձգնաւորներ կ'ապրին , զո՞ն , այս աշխարհին քէն ըրած ,
Կ'ուզե՞ս դուն ալ հաստատուիլ անոնց միջեւ յաւիտեան » :

— «Հոն շատ մռն է , ա՛հ , Տէր իմ » : Քրիշէնա խորհեցաւ ,
Ձեռքերուն մէջ առնելով իր գլուխը յոգնաբեկ .
Աչքերուն մէջ տրտմութեան վայրագ ամպրոպ մը անցաւ ,
Մինչդեռ կոյսը՝ դողահար՝ իր մարմինը դիւրածէր ,

Դէպի իրեն ցցելով որոշումին կը սպասէր :
Տեսիլքի պէս խուսափուկ , զոյումիւնովը ծաղիկն
Դեռ ամբասիր սիրտն անոր ոչի՛նչ կը զգա՛ր , ո՛չ իսկ սէր ,
Բացի խայծող երկիւղէն սարսուռներուն ցաւաղին :

III

Արշալոյսը կը սկսի իր ծորանուտ սուտակի
Շառայլովը երկներկիւ գագաթները լեռներուն ,
Ու կապոյտին բարձունքէն երկիւնքն է որ կը հակի ,
Մետաքսահիւս ամպերու բացուածքներէն լրծագոյն :

Լիճին ջուրերը բոլոր ու խութները պամպուկին
Ծածկուեցան կարծես թէ շղարշով մը ոսկեման,
Կռռնակները կապտածիր, տառեղները խմբովին,
Լիճին շուրջը երգեցին իրենց երգը առտուան :

Մարապուններն անտառին, սիրամարգները յոխորտ,
Իրենց տարբեր ձայներով անոնց երգը կրկնեցին .
Եւ այդ պահուն երկնային երգակցութեան մը մէջ յորդ,
Մարդու ձայն մը կը հծծէր դաշնութիւնով օդածին ,

Ընկերացած քնարին, անուշ երգ մը ներդաշնակ :
Քրիշէնա արձնցաւ . ու շեշտով մը կարեւոր .
— «Վալմիբին է, կակագեց, բանաստեղծը որ հիմակ
Արշալոյսը՝ երգելով՝ ողջունելու է ելեր» :

Օղին մէջը Թրժուուն երգը դադրեցաւ յանկարծ .
Կենինները ծածկող ծաղիկներուն վարդագոյն
Եւ Թանձրախիտ տերեւէ վարագոյրը երերաց .
Ու Վալմիբի երեւցաւ, մարգարէի մը հանգոյն :

Երբոր տեսաւ Լօթիւսը կերպովոխուած, հո՛ն մէկէն
Յափշտակուած՝ Թովուեցաւ, այդ կնոջմէն մոզական,
Եւ ակամայ վար ինկաւ նուագարանը ձեռքէն,
Ու կեցաւ հոգ քարացած, անխօս, անշարժ, անկենդան :

Քրիշէնա իբրեւ թէ արձանացուցած ըլլար . . . :
Յետոյ ձայնեց քերթողին. — «Սթալիէ՛ քու ցնորբէդ,
Ինձի պատմէ՛, Վալբիրի՛, հիացումըդ խանդավառ» :
— «Եը սիրեմ զայն, հեծկըլտաց, Թո՛ղ որ դիտեմ զինքը գէթ . . . » :

Միակ բառն էր զոր կրնար արտասանել Վալբիրի ,
Միակ բառը Թրժուուն , որուն իմաստը զիտէր ,
Բառ մը այնքան զրաւիչ, որուն կ'ըլլան միշտ գերի,
Տեղի տալով իր Թովբին հրապուրտ ու տաքերեր :

Քրիշէնայի ղէմքը փայլատակեց հրճուագին .
— «Զմայելի՛ դիցուհի՛, քեզի յարմար ո՛չ մէկ տեղ
Օթեան մը գտայ ես . . . տեղաւորուէ՛ քերթողին
Սիրտին խորը հիասքանչ, զեղեցկութեամբդ խելայեղ» :

Եւ Վալմիբի դողդըղաց, «Ա՛հ, կը սիրեմ» գոչելով :
Քրիշէնայի կամքը առաջնորդեց կոյսը լուռ ,
Բանաստեղծին սիրտին մէջ, զոր Թափանցիկ, հոգեթով
Բիւրեղի մը դիւթանքին վերածած էր հեշտալուր :

III

Իրեն միայն սահմանուած սքրավայրէն ներս մտաւ,
Հրապուրտ աղջիկը հանդարտօրէն, ամօթլեւած .
Մանկայն երբոր նայեցաւ Վալմիբիի պարզ, անդաւ,
Մալքերուն մէջը սիրտին, անձկութիւնով սարսուռաց :

Կարժես ձմրան սառնաշունչ բամբին էր որ կ'որոտար,
Անեղսգոյ, փոթորկոտ սառնամանիք մը հսկայ:
Դոյնը նետեց զողալով, Քրիշէնա տենդա՛ւար՝
Զայնին էն մեղմ շեշտերով՝ ուր իր հոգին պահուած կայ՝

— «Մար'նասցեա'լդ դուն ծաղիկ, ըսաւ կոյսին ժպտելէն,
Բանաստեղծին սիրտէ՞ն ալ կ'աճաբեկիս սարսըռուն.
Զիւնածաղկէն ալ փափուկ, աւելի նուրբ բոյրերէն,
Իտէացումը կնոջ երանաւէտ գիծերուն »:

— «Տէր իմ, յարեց աղչիկը, արհաւիրքէն տարաւիած,
Աս ի՞նչ տեսակ տեղ է որ յատկացուցիր Լօթիւսին,
Այս սիրտին մէջ կը տեսնեմ խորխորատներ մեծաբաց,
Ու զսգաթներ ձիւնապատ անտառներու լեռնային »:

Նոյն ատեն ես կը տեսնեմ խորուծիւնները ծովուն,
Էակներով լեվեցուն արհաւրալից, այլանդակ,
Մըրկայոյզ ու յորձնուտ սթէրները մոլորուն,
Եւ խռոշներն ալ մթին Էլլօրայի ընդարձակ:

Վայրագ ճիչեր կան մարդու, որոտումներ կայծակի,
Ու տումներ հոգեկան թռչողովին ուրուային,
Եւ անոնց քով ամէն բան, իրերը իսկ փանաքի,
Կ'եռեւեփին սիրտին մէջ այս եզական բերթողին:

Բայց իմաստուն չատուածը՝ Քրիշէնա՝ խօսեցաւ .
— «Ո'վ դուն ծաղիկ մարմնացած ոչ մէկ բանէ մի՛ վախնար,
Վալմիքի սիրտին մէջ եթէ ձիւնի Թանձրախաւ
Կուտակներ կան, դուն անոնց հուրքը եղի՛ր մշտավառ,

Ու հալեցո՛ւր զարնային զաղջ շունչովըղ ամէներն ալ .
Եթէ ջուրեր կան խորունկ, սեւ ժայռերով բոլորուն,
Մարգարիտը դո՛ւն եղի՛ր անոնց տակը շողախայլ,
Կամ կարապը ձիւնալանջ փրփրադէզ ալքերուն:

Սթէրներ կան եթէ հոն, չոր, ամայի ու հեռու,
Երջանկութեան ծաղիկներ օխտէ՛ անդու ոսկեծիր,
Եթէ այն տեղ հանգիստիս Էլլօրական խորշերու
Եւ կամ մուլ մութերու, ծիրանեմառ շո՛ղն եղի՛ր,

Հասնանչն եղի՛ր լուսաւէտ, ճառագայթը արեւուն,
Հո՛ն փեթրտէ լոյս-իտենջը երազներուդ նրբառէջ,
Խաղաղութեան ու յոյսի, ապագայի փողփողուն,
Փառքին ջախը վառէ դո՛ւն բանաստեղծին սիրտին մէջ »:

Օ Ք Թ Ա Վ Ֆ Է Օ Յ Ե Է Ի “Տ Ա Լ Ի Լ Ա” Ն

Իր զգայուն հեղինակութիւններովը ծանօթ վիպագիր Օգթավ Ֆէօյեէինն է Տալիլան, կենդանի գոյներով և յուզիչ տեսարաններով լեցուն այդ թատերախաղը : Հեղինակը , հոգեյոյզ և ճարտար կերպով պատկերացուցած է ճշմարիտ սիրահարը , ճշմարիտ սէրը այր երիտա-սարդին : Իր հերոսներէն մէկն է մաքուր սէրով տոչորուն երիտասարդ մը , որ կը խաբուի կնոջ մը ժպիտներէն , տուփոտ նայուածքէն և անոր մէկ դիւային համբոյրէն , և որ կը խուփէ հոգին , կ'ելեքարացնէ մտա-ծումը , կը մոգէ , կը հրդեհէ սիրտը , գերին կը դարձնէ վերջապէս բոլոր էութիւնը անոր՝ որ շատ լաւ գիտէ թէ իր սիրոյ առարկան սոս-րին զգացումներով լեցուն ինկած կին մըն է : Եւ կարելի չըլլար հա-ւատալ թէ՛՝ այդ հրէշ բոլոր բարոյականի վիժածը , իր մէկ թունաւոր նայուածքովը կրնայ դերին և իր տրիվներուն առարկան ընել արուես-տագէտ մը , որ դեղարուեստի աշխարհին մէջ համբաւ ունի և որ արդէն կը սիրէ համեստ աղջիկ մը , որուն ուխտած է յաւիտենական սէր : Ինքզինքնին այս տեսակ ցածոգի կրնար սիրոյ թակարդին մէջ ձգող այրերու տանջանքը , վիշտը և յուզումը ճշմարտագէտ սրտազեղ տեսա-րաններով կը պատկերացնէ Օգթավ Ֆէօյեէ իր այս տռամով , ուր կա-րելի չէ չհեկեկալ , երբ արուեստագէտը , յուսախաբ , կը հիւժի ու զինքը կրծող հիւանդութենէն կը մեռնի , և իր պաշտպանը անոր դիակին քով ծնրագիր , յուսաբեկ , աղեկտուր ճիչեր կ'արձակէ : Կարելի չէ նաեւ զսպել անկեղծ յուզում մը հո'ն՝ ուր արուեստագէտը իր նախկին սիրահարին դադաղին տուչ և անձնասպան կ'ըլլայ , մինչ անդին . . . բոլոր աս դժբախտութեանց պատճառը Տալիլա , իր նոր սիրահարին , թէնտ Բավլօի հետ նաւակով պտոյտ կ'ընէ , միեւնոյն կեղծ , խոստ-մնալից ժպիտը այտերուն վրայ , միեւնոյն հրաբորբոք նայուածքը աչքե-րուն մէջ :

Թատերախաղին անձերն են.—

Սերբորիուզ , նշանաւոր ցուքակահար մըն է . իր աղջիկն է Մարքա : Անրէ Բօզվայն , երեսասարդ ցուքակահար մըն է , որ Սերբորիուզի կ'աշա-կերէի : Անրէ եւ Մարքա գիրար կը սիրեն :

Շրվալիէ Դարնիօլի , հարուստ , սոսկալի իգամոյ մը : Իր հոմա-նուհին է Էյհօհօրա Դալֆօնիկրի , ուրիշ անունով Տալիլա : Շրվալիէ Դարնիօլի պաշտպանն է Անրէ Բօզվայնի եւ զայն Սերբորիուզի խնամ-բիւն յանձնած է՝ ցուքակահարութեան համար :

Անցնինք թատերախաղին : Սէրթօրիուզի սենեակին մէջն ենք : Անորէ իր վարպետին կուգայ օթեակի մը տոմս աւուր և հրաւիրելու

զինքը ու իր ասլիկը, իր կազմակերպած նուագահանդէսին, ուր՝ իր առաջին հեղինակութիւնը՝ օրհորա մը պիտի նուագէ : Սէրթօրիուզ՝ յուզիչ յեշտերով, ուրախութեան արցունքը աչքերուն մէջ . «Ես, կ'ըսէ, ինքզինքիս նուիրական պարտականութիւն մը նկատած եմ, ինձմէ հրաժեշտ առնող աշակերտներուս մէկ երկու խօսք ընել : Մտիկ ըրէ՛, սիրելի Անտրէս, պարտք կը դնեմ վրադ որ՝ ապերախտ մը չըլլաս . ունենաս ազնուութիւնը ճանչնալու թէ՛ ես քու վարպետդ եմ . հետեւարար պէտք է որ կեանքիդ մինչեւ վերջը սիրտիդ մէկ կողմը ինձի համար ունենաս երախտագիրտութեան վառ զգացումը . ինձմէ մզոններով ալ եթէ հեռու ըլլաս, այդ զգացումով՝ մօտս պիտի ըլլաս, ինձմով պիտի անդրիս : Երախտիք եւ սէր կը պարտիս, չըսելու համար, նուիրական պարտականութիւն մը, քու պաշտպանիդ Շըվալիէին, որ տաղանդիչ յայտնումին եւ համբաւիդ տարածումին գլխաւոր աղբակը հանդիսացած է : Գեղարուեստի աշխարհը բարձր ասպարէզ մըն է. եթէ յաջողիս, քեզի համար արդէն բացուած կրնայ նկատուիլ, քու այդ առաջին յաղթանակովդ, յաջողութեան ճամբան . մամուլը համբաւիդ, տաղանդիդ արժանի գովեստներով պիտի պանծացնէ անունդ : Իսկ եթէ չյաջողիս, ծաղրանքի ու հեգնանքի տարափով պիտի քննադատեն քեզ . յաւակնոտ մի ըլլար, համե՛ստ եղի՛ր . քու անձնական ուժերովդ, կարողութեանդ, արուեստիդ վրայ դիր վստահութիւնդ, ո՛չ թէ կարգ մը ծանծաղամիտներու պէս տգէտ, քառակուսի-գլուխ, համբակ, կարծեցեալ բարեկամներու մեծաշուք յայտարարութեանց վրայ . այդ ուռուցիկ խօսքերը թող քեզ չգինովցնեն, քեզ չշողաքորթեն, խուսափէ՛ ասոնցմէ, որովհետեւ իրենց չահախնդիր բարեկամութիւնը, արուեստիդ մասին ունեցած իրենց կատարեալ համբաւութիւնը, ուրիշ բանիչ պիտի ծառայեն, բայց եթէ քեզ անդունդը գլտօրելու, աչքերուդ փոշիցանելու, ոչնչացնելու, մահացնելու քու մէջդ գտնուող տաղանդը եւ կամ աշխատելու, յառաջդիմելու եռանդը ու փափաքը : Կը զգուշացնեմ քեզ, հեռու կեցիր կիներէ . ունեցի՛ր մէջդ կարողութիւն չգրաւ ուելու կիներէ, որովհետեւ կնոջ հրապոյրներէն աղբուիլ, անոնցմով զբաղիլ՝ սպաննել, մահացնել է ի՛նչ որ կայ քու մէջդ վսեմ, գեղեցիկ ու բարի, — արուեստիդ սէրը, գեղարուեստի հասնարը : Ա՛յաջափ, սիրելիս . ուրախ եմ որ քայլերդ չառած առիթ կ'ունենամ քեզի այս ամէնը բացատրելու եւ դո՛ւ եմ, որովհետեւ ինչպէս ըսի, բարոյական պարտականութիւն մը կը նկատեմ ինձի՝ քեզի ըսել, դիտել տալ այս ամէնը, որպէս զի արուեստիդ գեղեցկութիւնը անաղարտ եւ անայլայլ պահես եւ անոր վսեմութիւնը միշտ բարձր» : Ասանկ կը վերջացնէ փորձառու ծերունին, Սէրթօրիուզ, յուզունձ, տփուռնած, խոստանալով գիշերը ներկայ գտնուիլ նուագահանդէսին :

Անտրէս եւ ջութակահար Սէրթօրիուզի աղջիկը Մարթա զիրար կը

սիրեն : Այս անմեղ սիրտերը նայուած քներով դռնացած էին մինչեւ այն ատեն՝ երբ Սէրթօրիուզի լացակայ մէկ վայրկեանին, կը խօսին իրենց սէրին վրայ և Անտրէ կը խոստանայ Մարթայի՝ հօրմէն ամուսնութեան խնդրել զինքը, եթէ այդ գիշեր իր հեղինակած օրփռան ծախահարուի : «Ճակատաբայ պիտի գամ խնդրել ձեռքդ ու դնել սիրտս ոտքերուդ տակ : մեծ սրտեւտագէտ մը պիտի ըլլամ այն ատեն և արժանի գեղեցկութեանդ և հօրդ պատիւին» : Ծըվալիէ երբ կ'իմանայ Անտրէի այս սէրը, զինքը կը հեղնէ իր ընտրութեանը համար և գեղեցկութեան տիպար ցոյց կուտայ Էլէօնօրան, անոր մարմնական փափկութիւնները և մէկէ աւելի առաւելութիւնները վեր հանելով : «Կին էակը սիրէ, լայց մի ամուսնանար անոր հետ, որովհետեւ ամուսնութիւնը պիտի խաթարէ, ըթացնէ, գեղարուեստի ճաշակդ» :

Երկրորդ վարագործը կը ներկայացնէ թատերասրահը : Յայտագիրին առաջին մասը վերջացած է : Բարիզի նշանաւոր անձնաւորութիւններ ներկայ են : Դադարի միջոցին, ուրկէ վերջը Անտրէի հեղինակութիւնը պիտի նուազուի, Ծըվալիէ Դարնիօլի, Էլէօնօրայի կը պատմէ Անտրէ Րօզվանի կեանքին միջադէպերը . «Օր մը, երբ Տալմասիա կը գտնուէի, անտառէ մը անցայ . հրաշալի ձայն մը լսեցի, որ հեռուէն կ'արձագանգէր . դէպ ի այդ ձայնը ուղղուեցայ . տղեկ մը, առուակին եզերքը նստած՝ հին ջութակ մը կը հնչեցնէր և ձայնով ալ կ'ընկերանար : Կանգ առի և անոր հետ խօսեցայ, իր կեանքին մօթ խաւերը տակն ու վրայ ընել տուի . տեսայ այդ կանխահաս տաղանդին մեծութիւնը և որոշեցի մէկտեղ հոս բերել ջութակահար Սէրթօրիուզի վարպետ ձեռքերուն յանձնելու համար : Այդ Տալմասիայի հովիւր այսօր նշանաւոր ջութակահար մը եղած է ու հիմա պիտի նուազէ իր առաջին հեղինակութիւնը . այդ հեղինակը նոյն ինքն Անտրէ Րօզվանն է» :

Օրփռան կը նուազուի և մեծ յաջողութիւն կը գտնէ . ամէն կողմէ բռնն ծափեր . մեծ խանդավառութիւն . Էլէօնօրա փունջի մը հետ իր թաշկինակը կը նետէ ջութակահարին :

Երրորդ արարուածը Էլէօնօրայի բնակարանին մէջ, խիստ չքեղ և հումանուէրներու վայել սրահ մը կը ներկայացնէ : Էլէօնօրա՝ Դարնիօլի հետ նուազահանդէսէն կը դառնայ : Դարնիօլի այդ գիշերը իսկ Սպանիա երթալու համար անմիջապէս կը մեկնի : Անտրէ երկու բանի համար եկած է . նախ իր շնորհակալութիւնը յայտնելու նուիրուած փունջին համար և երկրորդ Էլէօնօրայի թաշկինակը իրեն տալու : Հոս է որ, Էլէօնօրա իր բոլոր կախարդանքը ի դորձ կը դնէ և կանայցի լկտի հրապոյրներով կը մոգէ զայն . աստիճանաբար կը մօտենայ երիտասարդին, կուրծքը կը դնէ անոր կուրծքին, որ արդէն հեւքի մէջ է, և այն տեսակ կրակոտ նայուածք մը կը մխէ Անտրէի աչքերուն մէջ, որ խեղճ երիտասարդը կը չմօրի, աչքերը կը փակուին, կը դողդղայ, ծունկերը

կթօտիլ կը սկսին և սլահ մը առաջուան այդ բարձրուղէշ նոճին կը տառապի թիկնա՛յումին մէջ : Հրաւումը զոյգ մը շրթունքներ կը մօտե-
նան սնոր սարսաղող , քրտնած ճակտին . էլէժնօրա կը համբուրէ . . .
ալ յաղթանակած է :

Չորրորդ տեսարանը կը ներկայացնէ Սէրթօրիուղի տունը : Մարթա
պատուհանը նստած , իր սիրահարին կը սպասէ , կը սպասէ որպէս զի
Անարէ զայս պաշտօնապէս խնդրելու իր ձեռքը հօրմէն : Երեք ժամեր
կ'անցնին նուազահասնդէսին աւարտելէն ի վեր և տակաւին Անարէ կու-
շանայ : Էլէժնօրա և Սէրթօրիուղ իրարու դրացի են : Մարթա , յան-
կարծ կը տեսնէ որ Անարէ Էլէժնօրայի տունը կը մտնայ : Կ'այլայլի , կը
դողայ ու տագնապի օոսկալի վայրկեանի մը մէջ , կը նուալի , դե-
տին գլորելով : Սէրթօրիուղ աղջկանը քով կը վազէ , պատուհանէն
դուրս կը նայի , իրողութիւնը կը կռահէ և Մարթայի քով ծնրադիր ,
կը մրմնջէ խիստ դողդոջուն ձայնով . — «Ո՛վ արդար և զկայ Աստ-
ուած , զրիժառուս դո՛ւն եղիր» :

Հինգերորդ տեսարանը կը ներկայացնէ դարձեալ Էլէժնօրայի տունը :
Օր . որ՝ սէր նոր . Էլէժնօրա Անարէէն յազեցած է . սակայն Անարէ իր
զգացումներուն բոլոր թափովը կը սիրէ այդ բոլը : Սոսկալի է այն
պատկերը՝ ուր Անարէ իր սէրին վրայ կը խօսի , մինչ Էլէժնօրա իր նոր
սիրահարին ժամադրութեան վրայ կը մտածէ : Տալիւս անտարբեր , բո-
ւորովին անզգայ է անոր կրած յուզումներուն : Եւ ալ աւելի օտարազ-
գեցիկ է տեսարանը՝ երբ երիտասարդ արուեստագէտը թքած արիւնոտ
թաշկինակը Էլէժնօրայի ոտքերուն կը նետէ , ըսելով . — «Տե՛ս , սիրե-
լիս , քու սէրդ ըրաւ» :

Էլէժնօրա ոտքովը մէկ կողմ կը գլորէ թաշկինակը ու կ'ըսէ . —
«Ինձի՞ համար եղար ատանկ . դուք արուեստագէտներդ ձեր տքնու-
թիւններով թոքախտ կ'ըլլաք . ես ինչ յանցանք ունիմ ատոր մէջ» :
Եւ մեկուսի . — «Արիւն կը թքնէ , ինձի՞ ինչ» , կը մուտայ և սեն-
եակէն դուրս կ'ելլէ :

Շրջալիէ դարձած է Սպանիաէն : Էլէժնօրայի կուգայ , ուր ամէն
ինչ փոխուած կը դառնայ : Երկարօրէն կը խրատէ Անարէն , համոզելով
թէ Էլէժնօրա բոլ մըն է , թէ ան սիրելու կոչուած կին մը չէ , թէ
զայն սիրել կատարեալ յիմարութիւն է : «Ես առանց սիրելու անոր սի-
րահարը եղած եմ և տակաւին չատեր . ես չորրորդն եմ , դուն հինգե-
րորդը և վեցերորդը Թէնօր Բալլօ» : Անարէ այս ամէնը Էլէժնօրայէն
ստուգել կ'ուզէ , և սպառնալիքով կ'ըսէ անոր թէ՝ ըսելիքներուն մէջ
երբեք չտոյ , ապա թէ ոչ կը սպաննէ : Խաբել և համար կոկորդիլոսի
արցունքներ չեն որ կը պակսին բոզին աչքերուն մէջ . ծունկի կուգայ
Անարէի ոտքերուն տակ և լալով . — «Սուտ եմ , Անարէ , ես քեզմէ
դատ ո՛չ մէկը կը սիրեմ , սպաննէ՛ զիս . բերնէս եղած վերջին բառը

քու անունդ պիտի ըլլայ» : Անորէ կը համոզուի այս խօսքերուն և Շըվալիէին դէմ անարգական լեզու մը կը դործածէ . «Շըվալիէ՛ , դո՛ւն կը ստես կոր , դո՛ւն կը կեղծես կոր : Էլէժօնօրա իր բոլոր սիրտովը կը սիրէ՛ զիս» : Շըվալիէ այն ատեն կը սկսի իր յուզիչ պատմութեան : — «Տեսայ զանոնք . անտառէն կ'անցնէի . հո՛ն երեք հոգի էին . ծեր մը , երիտասարդ աղջիկը և երիտասարդ մը : Գիտե՞ս թէ ի՞նչ կ'ընէին . ծերը այդ երկուքը կ'ամուսնացնէր իր օրհնութիւնով , և հոգ , թաւաքին խորհրդաւորութեանը մէջ կ'ուզէր նուիրագործել անոնց միացումը , այդ ուխտը , իր ջութակովը Բաղլիքը նուազելով , զոր ծերունի հայրը իր աղջկան խոստացած է եղբոր ամուսնութեան օրը միայն նուագել : Ալեւոր ջութակահարը խիստ զգայուն կերպով երգեց՝ տխուր , թրթուռն Բաղլիքը . . . մանկամարդ աղջիկը կուլար , ծերունիին մարմարէ ձակաւոր զգացած սարսուռէն խոնաւցած էր , աչքերը կարմրած ու այտերը թրջած էին , ալեւորին ջութակը կուլար , պղինձէ թիկիւրն ալ կուլային . . . և այս մահասարսուռ ներդաշնակութեանը մէջէն՝ մանկամարդ աղջիկը խեղդուկ ձայնով մը «Անորէ՛» կը մրմնջէր : Մարթա՛ն էր ամուսնացող այդ աղջիկը : «Ներէ՛ անոր , աղջիկս , Մարթա , ներէ՛ Անորէի» հազիւ կրցայ ըսել հեծկտալով : Մարթա ծունկի եկաւ , քեզի՛ համար աղօթեց : Ծերունին կը շարունակէր տակաւին Բաղլիքը , տակաւին իր աղջկան Գողգոթան կ'երգէր» :

Այս յուզիչ նկարագրութիւնը Անորէի հոգին անանկ կը խռովէ ու կ'արկնէ սիրտը որ՝ անմիջապէս կը հաւանի Շըվալիէի հետ այդ դժոխքէն մեկնիլ : Ու զայրոյթը իր դադաթնակէտին կը հասնի , երբ կ'իմանայ թէ Էլէժօնօրա ատենը չէ , այլ Թէնօր Բալլօի հետ լիճին վրայ նաւակով պոռոյտ մը ընելու դացած է : Անորէ գազանի մը պէս , երկու ատրճանակով դուրս կը խոյանայ զանոնք սպաննելու համար : Անտառին մէկ կողէն կը տեսնայ որ մարդկային դիմաստուերներ իրեն կ'ուղղուին : «Կեցէք , կը պոռայ , սպաթէ ոչ կը հարուածեմ» : Երկու դադաղակիրներ ևն , որոնք մեռած կին մը կը տանին ծերունի սգակիր հօրը առաջնորդութեամբ : Դադաղը կը կեցնեն և ալեւոր հայրը դողդոջուն ձեռքերով կը բանայ իր զաւկին երեսը ու կ'ըսէ . — «Ձեմ հասկնար թէ ի՞նչ կ'ուզէք ինծի պէս դժբախտ հօրմէ մը , որ իր մէկ հատիկին հետ գերեզման կ'առաջնորդուի» : Անորէ կը ճանչնայ այդ մօմէ արձանը . «Մարթա՛» կը գոչէ ու դիտապաշտ դետին կը գլորի : Էլէժօնօրա իր նոր սիրահարին հետ նաւակով կ'երեւայ ծովեզերքը և հեգնող նայուածքներով կը խնդայ : Շըվալիէ խելակորոյս ֆոքրայ իր զոհին մահը ու մազերը փետտելով կը գոչէ . — «Ո՛հ , դժբախտ պաշտպան , այդ անդունդին մէջ դո՛ւն գլորեցիր» :

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԽՆԴԻՐԸ

ՊԱՏԱՍԽԱՆ Մ. ՆԱԹԱՆԵԱՆԻՆ

Մ. Նաթանեան՝ իր *պեթ չե միօրինա* կուրիւն յօդուածին քում մեր կենդանութեան իբր պատասխան, երկու շաբաթուան մէջ, երկներ է, երկու սիւնակնոց յօդուած մը, զոր, խօսք մէջերնիս, լաւ կ'ընէր, որ իմէ աւելի հետաւետեան օրհնակին հետեւելով մէջեղ չը հանէր, չ'յնձալու, չը կ'ըսուէր համար անէր բախիկի մը մէջ եւ ասով անգամ մըն ալ չը հաստատէր, չ'ապացուցանէր համար լեզուական խնդիրներու մէջ, հակառակ վարձապէս մը ըլլալուն, ունեցած խաղտիւնը, զիտութիւնը: Իր յօդուածը մեր վրայ քաւ հիշատակ սպաւորութիւնը, զոր աղէկ կը լիւնենէր զգացած ըլլալ անկէ մօտաւորապէս քաւոր դար առջի հոյ լրագրութիւնը աչքէ անցուցած ասեցին: Ճիշտ հիշեցումն պէտք է, Մ. Նաթանեան անպատասխան պատասխանած ըլլալու եւ պատասխանած ըլլալով իրաւունք ինք վասկած ըլլալ կարծելու տղայամիտ մտածումով, ամբողջ երկու սիւնակներ մտնէր է, առանց սակայն գիտական հերքում մը տալ վտրմելու, իր կարծիքներուն պլանդակութիւնը հեզնող, ծաղրող մեր որոշ ու մեկին կենդանութիւններուն: Իր այդ յօդուածը, բացարձակապէս զուրկ գիտական ամէն արժէքէ, անարժան պիտի նկատուինք որ եւ է պատասխանի, եթէ մէջեղը չըլլար այժմէութիւնն ստացած աշխարհաբարի *խնդիրին* կարեւորութիւնը եւ եթէ Մ. Նաթանեան մեզ վարպետ զգարած չ'ըլլար թէ՛ իրեն բան տարկեցնելու մէջ նախանձն եմ, ժլատ եմ: Զէ՛ բարեկամ, ձեզի բան տարկեցնելու մէջ այնքան բիշ ժլատ ու նախանձն եմ, որ պիտի փութանք ձանձորութիւնը անել այս երկրորդ յօդուածով հաղորածը ընելու մեր առաջին յօդուածին, զոր կ'երեւայ հասկնալու կարողութիւնը չէ՛ք ունեցեր եւ խիղճն ալ չէ՛ք ըրեր անիբաւ տեղը զգարեցնելու մեզ, իբր ձեզի բան տարկեցնելու մէջ դժկամակող:

Մեր առաջին կենդանականով, ձեր *զուլի-գործոց* յօդուածին մէջէն երեք կէտ վեր հանած էինք. 1. Անհասկնալի գտած

էինք ձեր կրկին հարցումները: 2. Ծաղրելի, ծիծաղելի գտած ու հեզնած էինք ձեր այն կարծիքը թէ լեզու մը չը կրնար միօրինակ (uniforme) օրէնքներ, կանոններ ունենալ եւ պէտք չէ՛ որ ունենայ: 3. Նմանապէս ծիծաղելի ծաղրելի գտած եւ հեզնած էինք, ձեր այն միշտ կարծիքը թէ՛ աշխարհաբար պէտք է ընդերով, բարեւոյ կանցներով, ւայերով, ամուրով, իերով եւլն. կերպարանափոխ ընել, որպէս զի գրաբար չը մոռցուի եւ եկեղեցական արարողութիւնները անհասկնալի չը դառնան: Ասկէ աւելի որոշ ի՞նչ կ'ուզէիք: Ինչո՞ւ ուրեմն մեր այս որոշ ու հակասեց հարուածող կենդանութիւններուն դէմ նոյնքան որոշ պատասխաններ չ'ունեցաւ որ բան մը չ'ապացուցանող հիշեցած, սմաւիտ տաբանութիւններ (!) քաղցիցի, Խաւսովանեցէք որ՝ մեր առարկութիւններուն դէմ ձեր խեղկասակ խօսքերը վիճարկութիւնը իր նպատակէն շեղեցնելու դիտարկով քաւած հնդկին հոսող, պատուելիական հնարամտութիւններ են, որոնք ալ չեն կրնար անցնիլ եւ որոնք խնդիրն հետ որ եւ է կապ, առնչութիւն չ'ունենալով, բան մը չ'ապացուցանելով, չեղ չեն կրնար ունենալ լեզուական լուրջ վիճարկութեան մը մէջ: Իբր անիմաստ խօսքեր մէկ կողմ ետեսնէք ուրեմն զանոնք եւ դառնանք բուն խնդիրին:

Մ. — Անհասկնալի գտած էինք ձեր կրկին հարցումները, որովհետեւ անոնք անհիշատակ, սխալ, անիմաստ էին: Այո՛ բարեկամ, քեր էինք ու կը կրկնէինք. 1^{ին} կը նշանակէ հարցնել թէ աշխարհաբարի մէջ պէ՞տք է գրաբարի յատուկ ասացումներ ու փրակական կանոններ գործածել: Եւ նորէն կ'աւելցնենք. Եթէ աշխարհաբարի մէջ կարելի չըլլար աշխարհաբար չ'եղող ասացումներ կամ փրակական մեղեր գործածել, ալ ո՞ր կը ձմար սնոր աշխարհաբարութիւնը: Գիտցէ՛ք, լեզուաբան բարեկամ, որ ամէն կազմակերպուած լեզու՝ իր որոշ, բացարձակ, կապարի ու կապարի տակ դրուած միօրինակ օրէնքները, կանոնները ունի, որոնք ամենանհրաժեշտ իմաստ ելլալ չէ կարելի: Երբ լեզու մը կը գրենք կամ կը խօսինք, առանց յար-

գելու ադ լեզուն բնորոշող օրէնքներ , կանոններ , ո՛չ գրածնիս , ո՛չ ալ խօսածնիս այդ լեզուն եղած կ'ըլլայ : Այսպէս , օրինակի համար , շատեր կը կարծեն Քրանսերէն խօսիլ ու գրել , բայց անոնց ո՛չ խօսածը , ո՛չ ալ գրածը ժամանակէն է : Կը յուսանք , որ այս անգամ զոնէ , մտայնութիւնը կ'ունենաւ չը հարցնելու քէ՛ հապա ի՞նչ *է* : Աշխարհաբարն ալ այսօր հասած է որոշ կազմակերպութեան մը , ունենալով իրեն յատուկ կանոններ , օրէնքներ , բացառութիւններ : Ա՛յ անկաւ եղած է ուրոյն լեզու մը , իր օրէնքներով , կանոններով , բացառութիւններով հիմնովին անշատ հին հայերէնէն կամ գրաբարէն [*] : Ուրեմն ունինք , մէկ կողմէ այսօրուան աշխարհաբարն առանձին , ինքնուրոյն լեզու մը , եւ միւս՝ կողմէ՝ հին հայերէնը կամ գրաբար , ան ալ բոլորովին արբեր լեզու մը : Արդ , երբ կը հարցնէք քէ՛ *պե՞տք է աշխարհաբարի միջ գրաբարի կանոններ ու ասացուածներ գործածել* , ցոյց կուտաւ այդ երկու անջատ լեզուներուն իրարմէ ունեցած արբերութեան մասին ձեր բացարձակ տեսութիւնը , քանի որ չէ՞ գգար որ ինչպէս գրաբար գրաբար չ'ըլլար՝ երբ անկիւ գրուի աշխարհաբարի կանոններով խառնուած , անանկ ալ աշխարհաբար աշխարհաբար չ'ըլլար երբ անկիւ գրուի գրաբարի կանոններով խառնուած : Եւ որովհետեւ ձեր հարցումները սխալ , անհասկնալի , անիմաստ էին , քանի որ աշխարհաբարի վրայ գրաբարի կանոններ , ասացուածներ աւելցած ասեն՝ ալ անոր աշխարհաբարութիւնը չէր մնար , մենք , ձեր այդ սխալ , անհասկնալի հարցումները ուղղած էինք ճշտեալ բանաձեւը ստաշարկելով . *Պե՞տք է զորս , անխառն աշխարհաբար գրելով նոյնացնել խօսուած եւ գրուած լեզուն , քէ ոչ՝ պե՞տք է աշխարհաբարին վրայ աւելցնելով նաեւ հին գրաբարի կանոններ ու ասացուածներ , կազմել նոր գրական լեզու մը ու այս կերպով դեռ դիմաց ունենալ կիսակուսան աշխարհա-*

բարը (ժողովուրդին խօսած լեզուն) եւ արդի գրաբարը (գրագիտական գրելիք լեզուն) : Մեր այս բանաձեւով որոշ կերպով հասկցուցեր էինք , որ կամ պէ՛տք է աշխարհաբար գրել բացարձակապէս համաձայն անոր ամէն օրէնքներուն , կանոններուն , եւ կամ , եթէ կ'ուզուի աշխարհաբարին վրայ աշխարհաբար չ'եղող օրէնքներ կանոններ աւելցնելով՝ առաջ բերել նորօրինակ լեզու մը , քո՛ւ պարզ չի սան աշխարհաբար անունը , քո՛ւ անուանեն զանկիւ *արդի գրաբարը , արդի գրական լեզուն , կամ դեռ ինչ որ կ'ուզեն :*

Ամենահաճուն բարեկամս Ռ. Յ. Պէրպէրեան , ամեն ներկայացող առիթի մէջ , խօսելով ու գրելով կը պոռար քէ՛ ինք տխրիմ քննադատ էր զորս , անխառն աշխարհաբարին եւ չեմք պատշաճ գրաբարախառն աշխարհաբարին (խառնուրդ լեզուին , արդի գրաբարին կամ արդի գրական լեզուին , որը որ կ'ուզէք) : Հիմա Մ. Նարանեան բռնէն նոր արբեցողի մը պէս , ելեր կը հարցնէ մեզի որ՝ *եթէ գրաբարախառն աշխարհաբար մը , զորս անխառն աշխարհաբար չ'ըլլար , հապա ի՞նչ են Պերպէրեանի եւ իր լեզուով գրողներուն գրածները :* Արբեցէ՛ք , սրափեցէ՛ք բարեկամ , եւ մենք վստահ ենք որ այս անգամ զոնէ բաւական խելք պիտի ունենաւ , ինքնիրեննիդ գտնալով ձեր այս շատ վարպէտ (!) շատ խելացի (!) հարցումին պատասխանը . Կը սիրենք յուսով որ վերջապէս յաջողեցանք հասկցնել ձեզի , քէ ձեր կրկին հարցումները ինչո՞ւ համար *անճիշդ , սխալ , անիմաստ , հեշտաբար եւ անհասկնալի էին :* — 1. Եզուական միօրինակութեան լոյնդիքն զգալով , քէ եւ մեր առաջին յօդուածով՝ *լեզուն մը միօրինակ չը կրնար ըլլալ եւ պէտք չի որ ըլլայ* , այլանդակ կարծիքնուդ աններքերքութիւնը լեզուաբանօրէն հաստատելով զանկիւ չարաչար ծաղրել , նեղներ էինք , բայց կը տեսնեմք որ այս ամենք մեծ տարւորութիւն մը չեն գործեր ձեր քաղաքացու (!) միջին միայն , քանի որ հակառակ այդ կարծիքին լեզուաբանական արտաոգոյթիւն մը ըլլալուն , անոր կառուած մնացել է՛ք եւ հպարտութիւնով ալ նորէն կը կրկնէք , ձեր շատ հաճ-

[*] Յաջորդով պիտի պարզենք աշխարհաբարի մասին մեր տեսութիւնները :

հարեղ (!) նմանութիւնը թէ՛ ժողովուրդ մը *սիսկայէլ* որ լեզուական միօրինակ (uniforme) օրէնքներ, կանոններ գործածածէ անպատշաճաւ, կը նմանի ազդարարէր հովիւն որ շարունակ միեւնոյն կերպով փշէ: Երեւելի է հաւասար թէ սասանկ ազդարարութիւն մը հովիւն միայն կրնայ ազդել, կարելի կ'ըլլայ նաեւ հաւասար թէ լեզուական միօրինակութիւն մը հնարաւոր ըլլայ: Երբ դուք, լեզուի դասասու, այս կարծիքը առաջին անգամ յայտնեցիք, այն ասեմ խնդրեցիք վրանդ, հեզեցիք, ծաղրեցիք ձեզի: Բայց նիմա որ զանկա մարտն կը կրկնէք, բնական օրէնքի մը հանգամանքն ալ աւելցնելով անոր վրայ, ալ նիմա ցաւ, արգանատան միայն կը զգանք: Ուսուցանելու պատշտօնին կոչուած մ.կու մը կողմէ՛ զարգացում մի այս աստիճան արհեստիքի՛ն՝ որից զբացում չի պիտի կրնար արբեցնել մեր մէջ: Եւ որպէս զի պաշտօնի սարսկան բան մը ստովիք վերջապէս, խորհուրդ կուսանք ձեզի, դիմում բնել, ձեր շուրջը գնումը լեզուագէտ եւ լեզուաբան բարեկամներու, որոնց մէջ բաղդատական լեզուաբանութիւնով զբաղողներ ալ պակաս չեն եւ խնդրել անոնց որ եւ է մէկէն, Տալ ձեզի, այս մասին, պէտք ունեցած բացատրութիւններնիդ:

Դ.—Իսկ ձեր երրորդ եւ ամենէն նշանաւոր կարծիքին մասին թէ՛ *աշխարհաբար* պէտք է գրաբարի ձեւերով՝ կանոններով կերպարանափոխ ընել, որպէս զի գրաբարը չը մոռցուի եւ եկեղեցական ընթերցումները անհասկնալի չը դառնան, մեր արդէն քսածներուն վրայ նոր բան մը աւելցնելու պէտք չենք տեսնար, ձեր պատասխան-յօդուածին մէջ անոր նկատմամբ պահած բացարձակ լուրբեցնէ հետեւցնելով որ՝ գոնէ ասոր ալլանդակութեանը, արհաւիրութեանը կըցեր էք համազօրիլ. եւ *silence vaut approbation*.

Այսպէս կը վերջանայ, կը փակուի ուրեմն, երեք որոշ կէտերու վրայ, մեր մէջ տեղի ունեցած լեզուական այս վիճաբանութիւնը: Վերջացնելէ առաջ դիտել պիտի քանի սակայն, որ, առաջին յօդուածը գրած ասեմնիս, միտերնուս անգամ

չէիմ անցուցած լեզուական վիճաբանութեան բռնուիլ ձեզի նեւ, որովհետեւ թէ ձեր *պէտք է* միօրինակութիւն յօդուածով եւ թէ ուրիշ յօդուածներով—որոնց հանդիմաբար յատկապէս պահած ենք, պատեն աւիթով վերլուծումի առարկայ դարձնելու համար գտնենք—կըցեր էիմ հանջնալ, զհասեալ ձեր միտքի կարողութիւնները ու հասկցեր, համազօրէր էիմք՝ որ լեզուական յուրջ ու արժէք ունեցող վիճաբանութեան մը մէջ ձայն ունենալու որ եւ է կերպով կոչուած չէիք: Այդ յօդուածը գրած էիմք, պարզապէս զգացնել Տալու համար ձեզի, որ երբ ձեր բոլոր գրածները, ամիսիք, առանց սրբագրութեան կամ դիտողութեան կը հիւրընկալուին, զիտեցիք սակայն որ վրանդի մայր աշխարհ կրնան գտնուիլ, հետեւաբար գոնէ ասկէ ետք աւելի զգուշ եղէք, վատաբար զիտեցածնիդ միայն զեղեք: Եւ մանաւանդ չարաչար մի գործածէք, մի շահագործէք ձեզ կարողացող խաժամուծին միամիտութիւնը, Տգիտութիւնը:

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷՍՏ

[Փոստաբան]

ԷՋ ՄԸ ԵՓՐԱՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Եւ կրօնը՝ առաքինութեան ուրեւ էր, որուն համար խաչառ արհամարած են աշխարհիկ պնդումները ու պերհանքները եւ ապրած են անսահման պարզութեան մէջ, ապրած են համեստութեան եւ պատիւի շքանակին մէջ, յարգած են միշտ չաբաւորութիւնը, ժուկալութիւնը, որոնք իրենց համար առաքինութեան ստարներ էին: Առաքինի ըլլալու համար է որ իրենց գործերուն մէջ միօրինակ միակերպութիւն մը եւ իրենց պատշտներուն մէջ հաւասարութիւն կը ցուցնէին. կը զգուշանային նաեւ շրջապատի եւ շահագործի խոստովանելէն, զգում մոլորութիւններէ, ազտ, չարքաւարներէ. զուհիկ շահագործումներէ զերծ կ'ապրէին: Աստուծոյ իրենց համար եղած են առաքինութեան հերոսներ՝ որոնք կը պաշ-

հարէին աշխարհի մայրքիւններուն եւ մո-
լորտքիւններուն դէմ : Գ.—Ընկերի սէր :
Այս սկզբունքը մեծ տեղ մը գրաւած է
իրենց սիրտերուն մէջ : Խրառու համար
կ'ապրէին : Խրառու համար կ'աշխատէին
եւ իրաւուն կ'օժանդակէին կեանքի մասն
պայմաններու մէջ : Ծերերու նկատմամբ ալ
միշտ յարգանքով կը վարուէին : Այս կու-
սակցութիւնը կը սիրէր քնքերցանութիւնը :
Իրենց առօրեայ աշխատութեան ետքը, ժա-
մեր կը գտնէին Ս. Գիրքը սրահայտ : Կ'ու-
սումնասիրէին այն գիրքերը, որոնք օգ-
տակար կ'ընային ըլլալ հոգեպէս : Փիլիսո-
փայութեան մէջ, տաճարաբանութեան մասը
լցած էին իբր անօգուտ առաքինութիւն :
Սակայն բարոյականութեան մեծ սէր
տուած են, եւ Պիւրպագորեան խիստ բարո-
ականութիւնը նոյն կը շահապետէ եւ գրեթէ
իրենց մտանքները եղած է Բարոյականու-
թիւնը : Իրենց փիլիսոփայութիւնը ընդհան-
րապէս ալլախանական ձեւերու տակ օճոյ-
ուած է : Կը հաւատային հոգիի անմա-
նութեան եւ այս երջանիկ կեանքի ակնկա-
լու հոգիները կ'ապրէին ճակատագրական
խտերդապաշտութեան մէջ : Շեշեյլի է
միայնգամայն այս որոշ կազմակերպութեան
մէջ լուծութիւնը, Պիւրպագորեան լուծութիւնը :

ՎԵՐՋ

ԳԱՆԻԷԼ ՆՇԱՆԵԱՆ

Տեսնեյ այս սիւնակին սխալնե-
րուն մասին պարգեաւաւոր մրցումը
կողքին վրայ :

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՆՈՒԱԳԱՆԱՆԴԵՍԸ

Յառաջիկայ շարժու տեղի պիտի ունե-
նայ Պերպէրեան նուագահանդէսը, ճոխ յայ-
տաղիլով մը, որուն փայլին ջանք չէ խնա-
յած Կարգադիր Մամախաւովը : Ծոմսերը հա-
նոյրով կ'ընդունուին հասարակութեան եւ
Մամախաւովը զոհունակութիւնով կ'ողջունէ
անոնց փոխարժէքին կցուած բացատիկ նուէր-
ներ : Պերպէրեան նուագահանդէսին հան-
դէպ ցոյց տրուած համակիր ընդունելութիւնը
ապացոյց մըն է թէ՛ հասարակութիւնը որ-
չափ տաք խանդաղատանք մը յատկացուցած
է ողբացեալ դաստիարակին համայնքին ձգած
խիշտակին : Պերպէրեան վարժարանին,
որուն գոյութիւնը, տեսականապէս կ'ապա-
հովուի մանաւանդ նպաստի իր ցերեկոյթովը,
Պերպէրեան նուագահանդէսով :

ՆՈՐ ԳՈՐԴԵՐ

Ստացանք ծանօթ հրապարակագիր և
մեր համակրելի աշխատակից Արամ Անտոն-
եանի հեղինակած Դանձարան անուն ըն-
ծերգանութեան գիրքը, իրապէս խնամուած
աշխատութիւն մը, և լիովին օգտակար
ըզրոյցներու մէջ գործածութեան համար :
Թաւաշանեան առիթը ունեցած ըլլալով ան-
նկու Դանձարանը, զնահատելով անոր բո-
ւանդակութիւնը՝ 500 օրինակին փոխարժէքը
վճարելով, նուիրած է կրթական հաստատու-
թեան մը : Դըժեան Դատտունէն հրատա-
րակուած է մարտը ու խնամքով տպագրուած
այս դասագիրքը՝ յանձնարարելի է ամէն
վարժարաններու :

Ստացանք նաև ծանօթ գրագէտ-բժիշկ և
մեր հմուտ աշխատակից Տօրթ. Յովսէփ Տ.
Ստեփանեանի հեղինակած Մարդկային Մար-
միւնը, պատկերագրողութեան բազմաթիւ նկար-
ներով, Մատթէոսեան խնամուած տպագրու-
թիւնով, Որչափ ընծերգանութեան հանդի-
զիրք մըն է՝ մարդկային մարմինին կազմա-
խօսութիւնովը հետաքրքրուող ընծերգողնե-
րուն, նոյնչափ յաջող ու հեղինակաւոր հմուտ-
տուութիւնով պատրաստուած կարեւոր դասա-
գիրք մըն է, արժանի ամէն վարժարանի մէջ
կարդացուելու :

§ Հանձնքով կ'արձանագրենք թէ՛ Տօրթ.
Լեւոն էֆ. Պալմագարեան, նախկին ընթա-
ցաւարտ Պերպէրեանին, և վկայուած Բա-
րիզի բժշկական համալսարանէն, որ ինք-
զինքը համակրելի ու սիրուած դէմք մը զար-
ձուցած է իր բժշկական յաջողութիւններովը
և բնութիւններու մէջ շահած առաջնութիւն-
ներովը, ամուսնացած է նախորդ շարժու
նոյնչափ արժանաւոր մէկ անդամին հետ մե-
ծահամբաւ ու ծանօթ գերդաստանի մը, Օր.
Հայկանուշ Մատաշէնի, որուն հետ կը
կազմէ տիպար ամուսնու մը : Շնորհաւորութիւններ :

Gartal «Massis»i tiv 19i goghkine
vertchine etche

Հիմնադիր Կ. Ս. ԻԿԻՓԻՆՃԵԱՆ : Արտոնագիր ՏՕ ԲԹ. Ե. ՄԱՍԻՍ, Տպագր. ՃԻԶԱՆ :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆադայական .—Բա-
ժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 80 զրշ., դաւառներու համար՝
108 զրշ. և օտար երկիրներու համար՝ 35 ֆր. : Ձեռքէ վաճառումը
սասը փարս : Հասցէ՝ Դալաթիա , Բամանոօ փողոց : ԱՐԵՒԵԼՔ հրա-
պարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով , թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին
մէջ , օր աւուր աւելի՝ հրապարիչ դառնալով՝ նորանոր բարեօքուններու
շնորհիւ, զորս ներմուծած է թերթին մէջ : Իր առաւելութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ քլալու հանգամանքը, որով իր ընթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սաբաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները , եկեղեցական , կրօնական , անտեսական-սեղանաւորական , եր-
կրագործական , իրաւարանական և այլն , բացի գրական , բանասիրա-
կան գրուածքներէ , օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ ,
ոչոնք նիւթերու ճօն պէսպիսութիւն մը կը կազմեն :

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ , ԳԻՇԵՐԹԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵՍՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ , Մէօնիւրսար ճաւէտի .

Յրդ Տարեգրան

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, սոհմային
ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զտո , հիմնա-
կան կերպով կ'աւանդուին Հայերէն , Օսմաներէն , Ֆրանսերէն , Անգ-
լերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելալարժուութեամբ (բռա-
քիւի), ինչպէս նաև Գծագրութիւն , Տնարարութիւն , Կար ու Ձեւ ,
Ատեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով) ,
ձայնական և գործիական երաժշտութիւն , մասնաւորապէս Դաշնակ և
Զութակ : Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանե-
կան անթերի խնամք , առողջապահիկ պայմաններու մէջ : Բանակցու-
թեան համար դիմել վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին : Մանրամասն
տեղեկութիւն կարելի է ստանալ նաև , Դշ . Եշ . Շք . օրերը ժամը 5էն
9 դիմելով «ԴԱՐՈՒՆ» Գրատունը, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 :
Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ . օր :

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱՌՓՈՍԹՈԼԻՔ ԻՆՍՅԵԹԻԻՑ, ԳՈՆԵԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանիս առաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26/ին : Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով գոյէճական ծրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մանաւորէա դասատուներու միջոցաւ , կ'աւանդէ Օսմ . Հայ . Անգլ . Թրանս . և Յունարէն (Յոյն աշակերաններու համար) լեզուները , ինչպէս նաեւ ընտկան , բնապատմական , ուսողական , փիլիսոփայական , իրաւագիտական և վաճառականական դիտութիւնները : Մեծ խնամք կը տանի աշակերաններու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան : Դպրոցական նոր տարւան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի դասախօսէ առողջապահական և բնական դիտութիւններ և ձրիապէս պիտի դարմանէ հիւանդացող աշակերտները , եթէ զանուին : Գիշերօթիկներու տարեթօշակն է 10 Օսմ . ոսկի , որուն կէսը վճարելի կանխիկ և միւս կէսը Ծնունդին : Մանրամասն տեղեկութեան համար դիմել Տնօրէն Տօքթ . Ա . Յ . Հայկազեանի , Դանիա :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Հ Ի Ն Օ Ր Ե Ր

Պուէճ Խաչատուր Միսաքեան

Եւ իր ժամանակակից իմացականին վրայ հայեացքներ

ԳՐԵՏ Ե. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

Ժ.թ.դ Դարու Թրքահայերու իմացական, բարոյական և արուեստական վիճակին վրայ վաւերական յիշատակագիրներով զարդարուած հասոր մըն է՝ 140ի չափ էջերով , որ կը խօսի Պուէճ Խաչատուր Միսաքեանի և իր ժամանակակից մտաւորականներուն վրայ : Կը ծախուի Կ. Պոլիս բոլոր գրաւաճառներուն քով , գին 7½ դրուշ :

Միակ առտուն Հայաթերթը , կը հրատարակուի ար-
ՄԱՆՁՈՒՄԷ չալոյսին , և առտուն խիստ կանուխ՝ կը դանուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը , բովանդակելով հետադիւրներ , քաղաքական , ներքին , եկեղեցական ու իրթական լուրեր , գրական , տնտեսական և ընկերային յօդուածներ : Զորեքչարթի եւ չարաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի , չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու : Գինն է 10 փարա : Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դրշ . , գաւառ՝ 108 , արտասահման՝ 25 ֆր . : Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50 , գաւառ՝ 60 , արտասահման՝ 18 ֆր . : Ամէն գրութիւն ուղղել Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Ծ. էֆ . Դայսէրեանի հասցէին՝ 38 , Պապը Ալի Ճատտէսի :

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 60 զրոյ :

Արտասահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ոտանալու մեր պարզեւները,

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակօրէն կա՛խիկ է :

Զնորատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցէով

Պապը Ա.Լի ճասէսի, թիւ 38

درعليه باب على جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزته سى اداره خانه سى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte
CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Է Ր Դ Գ Օ Լ Է Ճ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարզներուն և խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ դործիքներ, վերջին դրութեանց համաձայն :

ԲԱՅՑԱՌԻԿ ԱՌԻԹ ՄԸ՝ ԳՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԷՆ. ՄԻԱՅՆ 20 ԴՐՈՒՇ՝ ՓՈԽԱՆ 60 ԴՐՈՒՇԻ : 1. Ասորա. վէպ. Բ. Սիւլւա. Թրգ. Թէրզեան 10 : 2. Ասրիկն. վիպերգ. Բաղտատարեան 10 : 3. Առողջապահութիւն. Տօքթ. Փէշախմալճեան 2½ : 4. Ներշնչմունք. Տ. Սէթեան 5 : 5. Դիւրուսոյց Մերոս Անզղ. Քերականութեան. Ասաաւրեան 15 : 6—7. Ամուսնական Խնդիրներ. 2 հատոր 2 : 8. Սփոռանք Ռաւիկն. Մ. Յովհաննէսեան 5 : 9. Ուղեցոյց Գրագիտութեան Թուրքերէն Լեզուի. Գալպճեան 5 : 10 Պիւսալոցցի. Լինհարտ և Դերարնդ 5 : Այս 10 կտոր վիպական, առողջապահական, գրական, լեզուաբանական, բանաստեղծական և մանկավարժական գիրքերը՝ որոնք 60 զրուշ արժէք ունին, 20 զրուշի կը ծախուին Զարգարեան Եղբայրներուն Գրատունէն՝ Բերա, Գուլէ-Գաւառ թիւ 695 : Գաւառներու համար 7 զրուշ աւելի : Գրատէրներ պէտք է վուժան օգտուիլ այս առիթէն, ղիմելով վերեւի հասցէին, ուր կը ծախուին նաեւ ամէն տեսակ թուրքերէն, հայերէն և ֆրանսերէն նոր թէ գործածուած գիրքեր, ածան և ղիւրամատչելի գրքերով :